

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՆՈՐ ԱԻԱԳ ԿՆՔԱՅԱՅՐ  
ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԵՂՈՒԱՐԴ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ  
Կ'ԱՅՑԵԼԵՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Արեւմտեան Թեմը երախտապարտ է, որ Առաջնորդ Սրբազան Զօր կոչին ընդառաջելով, հաւատացեալներ իրենց կարողութեան համաձայն, նուիրատուութիւններ կը կատարեն ի նպաստ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ կառուցման եւ կամ այլ կարիքներուն համար:

Որքա՛ն ուրախ ենք եւ կը գնահատենք, որ Տէր եւ Տիկին Եղուարդ եւ Գէրըն (Karen) Կիւլպէնկեան հաւատացեալներ փափաք յայտնեցին Մայր Եկեղեցւոյ Աւագ Կնքահայրերէն մին դառնալ: Պատուարժան հիւրերը Երեքշաբթի, Յուլիս 12ին Առաջնորդարան այցելելով հանդիպում ունեցան Առաջնորդ Սրբազան հօր հետ եւ որպէս Աւագ Կնքահայր 150,000 Տոլարի յանձնառութիւն ներկայացուցին Սրբազան Զօր:

Սրբազան Զայրը իր խորին երախտագիտութիւնը յայտնեց անոնց ունեցած հաւատքին ու սիրոյն հանդէպ Զայց. Եկեղեցւոյ եւ Արեւմտեան Թեմին: *«Երանի՛ անոր, որ յիշատակ մը կ'ունենայ Աստուծոյ Տան մէջ»:*